

ՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ

Հասարակության զարգացման ընթացքում աստիճանական անցումը նոր տնտեսական հարաբերությունների չէր կարող իրականանալ առանց տնտեսության բոլոր բնագավառներում անհրաժեշտ կառուցվածքային և ֆունկցիոնալ վերափոխումների: Դրանց մի մասը կարող էին իրականացվել միանգամից՝ հեղափոխական արմատական վերափոխումների միջոցով, որոնք սակայն ցավագին կարող էին լինել համակարգի համար, իսկ մյուս մասի համար անհամատեղելի էին կտրուկ փոփոխությունները և անհրաժեշտ էր աստիճանական, քայլ առ քայլ փոփոխություններ իրականացնել: Փոփոխությունների իրագործումը դժվարանում էր նաև այն պատճառով, որ նոր տնտեսական հարաբերությունները, որ համարվում են «զարգացման» պրոցես, իրականում բերում էին տնտեսության անկման, գործող տնտեսական կապերի փլուզման և արդյունքում՝ ֆինանսավորման խիստ իջեցման:

Այսպիսի վիճակի մեջ հայտնվեց առողջապահության համակարգը իննսուհական թվականների կեսերին, երբ պետք էր ապահովել հասարակության առողջության պահպանումը և հիվանդների բուժումը այն դեպքում, երբ թերֆինանսավորման պայմաններում բուժական օգնություն և սպասարկում իրականացնողները այլևս չէին կարող գործել ֆինանսավորման նախկին մեխանիզմներով և տնտեսավարման սկզբունքներով: Սկսվեց առողջապահության համակարգի հարմարեցումը նոր տնտեսական հարաբերություններին՝ բուժական հիմնարկները վերածվեցին ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտների, որը ըստ էության հնարավորություն տվեց ինքնուրույն տնտեսել իրենց ֆինանսական միջոցները: Սա իր հերթին կարող էր գործել այն դեպքում, եթե փոխվեր բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնողների պետական միջոցների հատկացման մեխանիզմը:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր իրականացնել մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝

ա/ ստեղծել պետական մի մարմին, որը չունենալով որևէ գերատեսչական կամ կառավարող մարմնի շահ, իրականացնել վճարումներ առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում մատուցված բժշկական ծառայությունների դիմաց, այսինքն բժշկական ծառայություններ գնող մի առանձին մարմին:

բ/ պետական նպատակային ծրագրերը ընդգրկող հիմնական ծառայությունների փաթեթի սահմանում, որը որպես կարևորագույն խնդիր կլինեք կառավարության իրավասության շրջանակներում:

գ/ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների վճարման մեխանիզմների կատարելագործում:

դ/ առողջապահության ֆինանսավորման տեղեկատվական-վերլուծական համակարգի բարելավում:

Ուստի 1997թ.-ի հուլիսից անցում կատարվեց մահճակալ-օրերի դիմաց վճարումից՝ դեպքի դիմաց վճարմանը հիվանդանոցներում և հաճախումների դիմաց վճարումից ազգաբնակչության թվի դիմաց վճարմանը՝ պոլիկլինիկաներում:

Շարունակելով տարբեր տնտեսական մակարդակ ունեցող երկրներում գործող առողջապահական համակարգերի ուսումնասիրությունները, արվեց հաջորդ, մեր կարծիքով, կարևոր քայլը, որը պետք է արմատական բեկում մտցնի մասնատված բժշկական ծառայությունների որակի բարձրացման և ծառայությունների դիմաց փոխհատուցման օբյեկտիվացման գործում:

ՀՀ կառավարության 18.12.1997թ. թիվ 593 որոշմամբ ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն /ՊԱԳ/, որպես պետական կառավարման հանրապետական մարմին, որը կոչված է 1999 թվականի հունվարի 1-ից իրականացնել պետական պատվերի տեղադրումը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում /պայմանագրերի կնքում/, դրանց կողմից կատարված աշխատանքների որակի և ծավալների սահմանված չափանիշներին համապատասխանության վերահսկողությունը, մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման իրականացումը /հավաքագրված տվյալների մշակում, ամփոփում, վերլուծություն և ֆինանսավորում/: Փաստորեն, ինչպես և աշխարհի մեծ մաս երկրներում, Հայաստանում նույնպես տարանջատվեց բժշկական օգնության տրամադրման և դրա դիմաց վճարումների իրականացման ֆունկցիաները, դրանով իսկ հստակեցնելով պետական պատվերի շրջանակներում պատվիրատու-կատարող փոխհարաբերությունները: ՊԱԳ-ի ստեղծումը դիտվում է որպես պետական ծրագրերի ֆինանսավորման կանոնակարգման կարևոր բաղադրամաս: Այն, լինելով հանրապետական-ուղղահայաց կառույց, իր կառուցվածքում ստեղծել է իր մարզային ստորաբաժանումները /10 մարզային վարչություն և Երևան քաղաքի վարչություն/, որոնք պետք է իրականացնեն համապատասխան գործունեություն մարզերում: Իր գործունեության ընթացքում ՊԱԳ-ը մշակել և շարունակում է կատարելագործել անհրաժեշտ օրենսդրական դաշտ, պետական պատվերի սահմաններում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման նոր մոտեցումներ և հաշվարկման մեթոդիկա, մեթոդական ուղեցույցներ առողջապահական հիմնարկների համար, բժշկական օգնություն իրականացնողների հետ կնքվող պայմանագրեր, հաշվետվության ձևեր և այլն:

Այսպիսով ՀՀ առողջապահության համակարգի ֆինանսավորման վերափոխումների աստիճանական քայլերը բերեցին ապահովագրական գործակալության տիպի մի կառույցի ստեղծման նպատակահարմարության գաղափարին: Այն սկզբում կունենա ֆինանսական միջոցների բաշխողի դեր, դեռևս զուրկ լինելով ինքնուրույն ֆինանսավորման միջոցներ հավաքագրելու ֆունկցիաներից:

ՊԱԳ-ը իր ամբողջ գործունեությամբ և աշխատանքի մեխանիզմներով հանդիսանում է մի մոդել, որն ապագայում հեշտությամբ իր վրա կվերցնի պետական պարտադիր բժշկական ապահովագրությունն իրականացնողի ֆունկցիաները: Օրենսդրական համապատասխան փոփոխություններից հետո /«Պարտադիր բժշկական ապահովագրության մասին ՀՀ օրենք»/ ՊԱԳ-ը կնպաստի բժշկական պարտադիր ապահովագրական համակարգի ստեղծմանը և ներդրմանը՝ վերածվելով պարտադիր բժշկական ապահովագրության գործակալության:

Ա.Ե. Սկրոչյան, Ա.Ա. Տեր-Գրիգորյան,
Լ.Ս. Յոլյան, Մ.Կ. Նազարեթյան

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական առողջապահական
գործակալություն